

Սևանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար

**Համայնքապետարանի աշխատակազմի  
Ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ  
/ Ծածկագիր՝ 3.2-11/**

Առաջին կարգի մասնագետը՝

- ա) Իրականացնում է համայնքի սեփական սեկտորի հողի հարկի և գույքահարկի տարեկան հավաքագրման աշխատանքներ;
- բ) Իրականացնում է համայնքի սեփական սեկտորի հողի հարկի և գույքահարկի տարեկան հավաքագրումներ, կատարում է ՏԻՄ-ում և աշխատակազմում մուտքագրված հարկերի, տուրքերի, վարձավճարների, ծրագրերի ինֆորմացիոն բազայի և մյուս գործառույթների հետ կապված այլ տեղեկատվությունների համակարգչային զետեղման աշխատանքներ, ղեկավարում է բաժնի համակարգչային ծառայությունը, իրականացնում է ֆիզիկական անձանց շինությունների, փոխադրամիջոցների գրանցում, գույքահարկի հաշվարկում, վճարումների մուտքագրում, հաշվառման և գնահատման փոփոխություններ, համայնքի ավագանու կողմից տրված զիջումների մուտքագրում և հաշվառում, անշարժ գույքի կադաստրի կողմից տրված ամսական հաշվետվությունների միջոցով նոր շենք-շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների փոփոխություն և այլն: Իրականացնում է ֆիզիկական անձանց գծով հողի հարկի, շինությունների ու փոխադրամիջոցների հաշվառումը, վճարումների գանձումները, տեղեկատվության պատրաստման տրամադրումը, կազմում և ներկայացնում է հաշվառման ցուցակներ, կատարում ֆիզիկական անձանց գծով հաշվառման, գրանցման ճշգրտումներ
- գ) Կատարում է տեղեկանքների, գրությունների, նամակների պատասխանների տպագրում, օպերատորական ամբողջ աշխատանքը,
- դ) Անշարժ գույքի կադաստրի ամսական հաշվետվությունների հիման վրա հաշվառում է նոր շենք-շինությունները, փոփոխում է դրանց գնահատման տվյալները, մուտքագրում կադաստրից ստացված գույքագրման տվյալները:
- ե) ապահովում է «Համայնքային կառավարման էլեկտրոնային համակարգ» ծրագրի «Ծառայություններ» ենթաբաժինը՝ հողի հարկի և գույքահարկի պարտքեր:
- զ) պատրաստում է տրամադրում է ֆիզիկական անձանց ապառքացուցակները և ամփոփագրերը, յուրաքանչյուր ամսվա վերջում մարզպետարան է ներկայացնում ճշգրտված, ուղղված հողի հարկի և գույքահարկի արխիվացման բազան
- է) ճշգրտում է իր իրավասությանը վերաբերող հարկատեսակների հարկման բազան և ապառքները, Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով առաջարկություններ է ներկայացնում շինությունների, տրանսպորտային միջոցների հարկատեսակները չվճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ վարչական վարույթ սկսելու կամ սահմանված կարգով վարչական տույժի ենթարկելու վերաբերյալ:
- ը) Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

**Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝**

- միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի և փորձի.
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում ,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

- իր պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում օտար լեզվի (լեզուների) տիրապետում (ազատ կարդում և կարող է բացատրվել) :

Մրցույթը կանցկացվի 04.12.2017թ.' ժամը 11:00-ին, համայնքապետարանում / ք. Սևան, Նաիրյան 164/

### **Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝**

ա) գրավոր դիմում (տրվում է հանձնաժողովի անունով՝ նշելով այն պաշտոնը, որին հավակնում է դիմողը)։

բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները։

գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801-ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը։

դ) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ։

ե) հայտարարություն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվին (լեզուներին) տիրապետելու մասին։

զ) օրենքի 12 հոդվածի <<ե>> կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք։

է) մեկ լուսանկար՝ 3 X 4 սմ չափսի։

ը) անձնագրի պատճենը։

ՀՀ քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր։

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից, համայնքապետարանում / ք. Սևան, Նաիրյան 164 / և ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, մարզպետարանում / Գրիգոր Լուսավորչի 36 / :

Մրցույթների անցկացման վայրի, օրվա և ժամի հնարավոր փոփոխությունների մասին կհայտնվի լրացուցիչ՝ մրցույթից առնվազն մեկ շաբաթ առաջ։

ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԿԵՏՆ Է՝ 16.11.2017թ.

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ / ք. Սևան, Նաիրյան 164, հեռ. 0261-4-00-05 / և ք. Գավառ, մարզպետարան։